
ԱՍՈՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(XIX Դ. ՎԵՐՁ – XX Դ. ՍԿԻՁԲ)

ԳԱԼՅԱ ԴԱՎԻԴՈՎԱ

Հայաստանի ասորական էթնոսի ուսումնասիրման պրոբլեմն ազգագրական և մշակութաբանական տեսանկյուններից գրեթե դիտարկված չէ, եթե հաշվի չառնենք Վ. Պ. Մուրաթխանի, Ե. Գ. Կազարովի, Եր. Լալայանի ուսումնասիրությունները¹: Մեր խնդիրն է, մասնավորապես, Հայաստանի ասորիների հարսանեկան ծեսի համեմատական ներկայացմամբ մասամբ լրացնել եղած բացը:

Ասորիները Հայաստան են գաղթել 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի ընդունումից հետո, հետագայում Առաջին համաշխարհային պատերազմից առաջ և հետո նոր խմբեր եկան Թուրքիայից (լեռնական ասորիներ՝ Գեավար, Ջուլամերիկ, Հաքեար), Իրանից (դաշտավայրային ասորիներ՝ Ուրմիայի, Մույշավա, Սուպուրգուն, Նազի, Գույթափա, Արմուտաղաջ գտարյուն ասորական գյուղերից): Սկզբնական շրջանում ասորիները տեղաբաշխվել են Լեռնային Ղարաբաղի Թարթառ գյուղում՝ 100 ընտանիք: 1840-ական թվականներին նրանց մեծ մասը տեղափոխվեց Արևելյան Հայաստան՝ Կոյլասար (այժմ՝ Արտաշատի շրջան, գյուղ Դիմիտրով), Դվին, Արզնի, Բյուրեղավան, Հանքավան, Արմավիր, Նոր Արտազերս: Ապրելով հայկական գյուղերում հայերի հետ միասին՝ բնականաբար միմյանցից վերցրել են տնտեսական և մշակութային արժեքներ, որոնք առ այսօր կենցաղավարվում են երկուստեք: Եվ տարբերակել, թե ով ումից է փոխառել՝ շատ դժվար է այսօր, քանզի դրանք համահարթվել ու ընդհանրական են դարձել երկուստեք:

Ամուսնությունը սոցիալ-մշակութային կարևոր երևույթ է, որն որոշակիորեն կապված է հասարակության մեջ գերիշխող հարաբերությունների հետ և արտահայտում է մարդկային զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Այն արտացոլում է սոցիալ էթնոսի պատմության հիմնական փուլերը և էթնոմշակութային առանձնահատկությունները, մասնավորապես՝ ունեցվածքաիրավական չափանիշները, բարոյականության պատկերացումներն ու ավանդույթները:

¹ В. П. Муратхан. Обычаи, связанные с рождением и воспитанием ребенка сирийцев СССР.– «Советская этнография». М., 1937, № 4; Е. Г. Кагаров. Свадебные обычаи ассирийцев.– «Советская этнография». М., 1933, № 1; Եր. Լալայան. Վասպուրականի ասորիները.– «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գ. 24, Թիֆլիս, 1913:

Ժողովրդի ավանդական կենցաղում ամուսնությունը վավերացվում է հարսանիքով և օրենքի ուժ ստանում պսակադրությամբ: Հարսանյաց ծիսաշարքը և գործող արարողակարգն ապահովում է տղամարդու ու կնոջ սեռական կապի հարատևությունը և ամրությունը: Դրանով սկիզբ է դրվում ընտանիքի ձևավորմանը, սերնդի շարունակմանը: Հարսանյաց ծեսը պատմաազգագրական կարևոր աղբյուր է ժողովուրդների էթնիկական պատմության, նրանց հասարակական կարգի, ամուսնության ավանդական ձևերի, հավատալիքների ու կրոնական պատկերացումների, ինչպես նաև բուն հարսանյաց ծեսի պատմության հետազոտության ժամանակ²:

Հարսանեկան ծիսաշարն ընդհանրացնում է տվյալ էթնիկական հանրույթի պատկերացումները կնոջ և տղամարդու դերի, սերնդաձի, ամուր ու իդեալական ընտանիքի, երջանկության և բարեկեցության մասին: Այն ծիսականորեն ձևակերպում է պատանու և աղջկա անցումը մի վիճակից մյուսը, աղջկա հայրական տնից անջատվելու ու նոր ընտանիքի մեջ մտնելու սահմանային փուլը:

Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններում հարսանեկան ծիսակարգն աչքի է ընկնում մեծ բազմազանությամբ: Մակայն, ըստ էության, բովանդակային առումով և հիմնական փուլերով այն ընդհանրական է ողջ Հայաստանի համար: Նույնը կարելի է ասել նաև ասորական հարսանեկան ծեսի վերաբերյալ: Մասնավորապես, տարբեր երկրներից ներգաղթած ասորիների հարսանեկան ծեսը, չնայած որոշակի բազմազանությանը, այնուամենայնիվ, հիմնական փուլերով խիստ ընդհանրական է համաստրական միջավայրում գործող բուն ծեսի հետ:

Ինչպես հայերի, այնպես էլ ասորիների հարսանեկան ծեսն ընթանում էր երեք փուլով՝ նախահարսանեկան, բուն հարսանեկան և հետհարսանեկան:

Նախահարսանեկան փուլի մեջ մտնում էին խնամախոսությունը (աղջիկտես-»բրաթա խզեթա»), ուզնկանությունը («էշիյը»), խոսքկապը («նիշանկա»), նշանադրությունը («տալարույթա»):

Բուն հարսանեկան փուլն իր մեջ ներառում էր եզնմորթեքը («կրնյանա կտալթա»), հինա դնելը («խննափուլի»), տաշտադրեքը («լախմա փյեթա»), հարսին հագցնելը («քյալուսուլակա»), հարսանիքի ավարտը՝ 4-րդ օրը («սաբախտա»):

Հետհարսանեկան փուլն էին կազմում գլուխլվանեքը («րիշախալալթա»), հարսի առաջին դարձը («շուքրավա»), հետհարսանեկան քառասունքը («արպիյը») և այլ ծեսեր:

Ընդունված կարգի համաձայն՝ և՛ հայերի, և՛ ասորիների մեջ տղան ու աղջիկն ընտրություն կատարելու իրավունք չունեին. այն հիմնականում ծնողների մենաշնորհն էր, թեև քաղաքներում, ունևոր ու համեմատաբար կրթված ընտանիքներում հաշվի էր առնվում նաև զավակների ցանկությունն ու ընտրությունը: Հիմնականում երիտասարդները ծնողների համաձայնությամբ էին ամուսնանում, բայց լինում էին նաև բացառություն-

² Н. П. Лобачева. Свадебный обряд как историко-этнографический источник.- «Советская этнография», 1981, № 2, с. 36.

ներ: Այսպես, ասորաբնակ Փոքր Շահրիարում (Ռսի Շահրիար)³ բանասացը նկարագրում է մի դեպք. նույն աղջկան միննույն ժամանակ խնամախոսության էին եկել չորս երիտասարդ: Աղջկա հայրը չորսի բերած նշանները դնում է սեղանին (մեկը մեծահարուստ է լինում, բերած նշանը՝ ոսկե գոտի, մյուսինը՝ մատանի, երրորդինը՝ հայելի, սանր, չորրորդինը՝ ոչխարի կտտոր), որպեսզի եկածներից ոչ մեկը չնեղանա, դիմում է դատերը, ներկայացնում նշանները՝ որը ում է պատկանում և խնդրում ընտրություն կատարել: Աղջիկը ընտրում է ոչխարի կտտորը, քանզի սիրում էր դրա տիրոջը: Այստեղից հետևություն, որ ծնողները միշտ չէ, որ բռնանում էին իրենց զավակների ընտրության վրա, երբեմն հարգում էին նրանց զգացմունքները:

Ըստ XIX–XX դդ. ժողովրդական կենցաղավարման, հայոց մեջ, հատկապես գյուղական միջավայրում, չափահաս էին համարվում 18 տարեկան տղան, 15 տարեկան աղջիկը (որոշ գյուղերում՝ նույնիսկ 10–13 տարեկան), ինչը գրեթե չէր տարբերվում եկեղեցական կանոնիկ սահմանումներից⁴: Նույնն էր ասորական միջավայրում: Աղջկան հավանելու ձևերի ու միջոցների մեջ ևս շատ ընդհանրություններ կային, այդ թվում՝ խնձորի կամ երգ-խաղիկների միջոցով իրենց վերաբերմունքն արտահայտելու ավանդույթը: Հատկապես տոնախմբությունների ժամանակ ասորիները երգում էին տարբեր բնույթի երգեր, որոնց միջոցով արտահայտում էին իրենց սերը.

Տույռանը ռամը, խաճունթա քյուփուն
Բրըշըն քյս տլրթթի, խա ուրխա փթուխուն,
Ախտուն բայիթուն, ուրխի լա դուկուն,
Ա լրի փշիմա, ախտուն մաղղիթուն⁵:

Բարձր սարեր մի քիչ ցածրացեք,
Գնում եմ յարիս մի ճամփա բացեք,
Դուք որ ուզենաք, ճամփաս մի փակեք
Այս սիրտս թոշնած, դուք ուրախացրեք:

Այս երգը պահպանվել է 1914 թվականին Ուրմիայի (Իրան) Արմուտաղաջ գյուղից եկած ասորիների (Յակու բիթ Ավլի բար Ավղիշոյի⁶ երգերից) մեջ: Այն իր բովանդակությամբ շատ է հիշեցնում հայկական ժողովրդական «Մարեր կաղաչեմ» երգը:

Ասորական և հայկական հարսանիքների մեջ շատ են թե՛ նմանությունները, թե՛ տարբերությունները: Հարսանյաց ծեսերի շարքից շատ հետաքրքիր նկարագիր ունեն էրկկոդով թատերականացված խնամախոսության ծեսը: Խնամախոսության ժամանակ, երբ տղայի ծնողները գնում են աղջկա տուն, դիմում են նրա ծնողներին, ասելով՝ «Եկել ենք Ձեզ հետ բարեկամանալու» («Բայախ մնոխուն խզմայութա օղախ»): Հայոց մեջ, եթե

³ Գյուղն այդպես էր կոչվում, քանի որ այնտեղ էր գտնվում ռուսական ուղղափառ եկեղեցին:

⁴ Մ ա շ տ ո ճ. Էջմիածին, 1894, էջ 154:

⁵ Գ. Դ ա վ ի դ ո վ ա. – Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), 1986, տ. 2: Բանասացներ՝ Վեռա Ավյան, Սոնա Ավղիշյան:

⁶ Իրականում ասորական անուն-ազգանուններն ունեն այս տեսքը: Թարգմանաբար նշանակում է Ավլիների ընտանիքից՝ Ավղիշոյի հետնորդ, իսկ ավլի բարը թարգմանվում է որսորդ:

չէին ցանկանում աղջիկ տալ, պատասխանում էին. «Կորուստդ մեր տանը չէ, դամաթդ Աստուծոց ուզե», իսկ ասորական տարբերակում ուղղակի՝ «Ձենք ցանկանում Ձեզ հետ բարեկամանալ» («Լէիս բիյա մնոխուն խզմայութա օդախ»): Թե՛ հայերի, թե՛ ասորիների մեջ նշանդրեքի ժամանակ ներկա էին լինում շատ մոտ ազգականներ (ծնող, հորեղբայր, քավոր): Եթե հայոց մեջ տրվելիք նշանը վաղօրոք եկեղեցի էին տանում և օրհնել տալիս քահանային, ուստի և վերջինիս ներկայությունը նշանդրեքին պարտադիր չէր (Մուշ-Տարոն), ապա ասորիների մեջ և՛ քահանան (կաշա), և՛ տիրացուն (շամաշա) պարտադիր գործող անձինք էին: Ասորիների մեջ նշանդրեքի ժամանակ քահանան մատանին գցում էր գինով լի բաժակի մեջ, ապա փոխանցում միջնորդ կնոջը⁷, որն էլ խնդրում էր աղջկան վերցնել նշանը⁸: Աղջիկը մի ումպ խմում էր գինուց և մատանին դնում մատին: Այս ծեսը կոչվում էր նիշանկա, որոշ գյուղերում՝ լիշանկա: Այն, փաստորեն, համարվում էր ամուսնական պայման, որն ասորիներն անվանում էին «փալգյա դ բուռախտա»⁹, այսինքն՝ կեսպսակ: Իսկ հայոց մեջ կեսպսակի ժամանակ երկու խնամիները կտրում էին մեկ լավաշից հավասար մասեր, որն էլ հանդիսանում էր նրանց բարեկամանալու պայմանը¹⁰: Եթե հայոց մեջ հարսանիքի նախորդ գիշերն էին հինա դնում (հինադնեք) հարսնացուի մատներին, ապա ասորիները խոսք առնելուց հետո նշանդրեքի նախօրեին հինայով ներկում և զարդանախշում էին աղջկա ձեռքերն ու մատները, երբեմն ներկում էին ձեռքերի ափերը և ոտքերի մատները, նույնիսկ՝ փեսայի և հավաքված երիտասարդների (իհարկե՛ ցանկացողների)¹¹: Փեսացուի կողմից ուղարկված հինա (խննա) դնող կնոջն այս աշխատանքի համար վարձատրում էին դրամով կամ էլ որևէ նվեր (փաշշքյաշ) անում¹²: Այս գործողություններից հետո աղջիկը ասորիների մեջ կոչվում էր հարս (քյալու), իսկ ծեսը՝ հինայի գիշեր՝ «լելա դ խննա»¹³: Հինա դնելը նմանողական մոզոթյան մի դրսևորում էր՝ մյուս մասնակիցներին ևս բախտավորություն շնորհելու, չամուսնացածներին թագ ու պսակի արժանացնելու նպատակով:

XIX դ. վերջին – XX դ. սկզբին ասորիների ավանդույթում ընդունված էր հարսի գլխագինը: Նշանդրեքից որոշ ժամանակ անց հարսի տանը երկկողմ հարազատների միջև սկսվում է գլխագնի սակարկությունը¹⁴: Գլխագինը՝ «խիլլա, նիգդա»¹⁵ տալիս էր տղայի

⁷ Միջնորդ կինը հարսանեկան ամբողջ ծիսաշարում նվերներ էր տանում փեսայից՝ հարսին, հարսից՝ փեսային, զոքանչից՝ փեսային, փեսայից՝ զոքաչին:

⁸ E. Г. Кагаров. Նշվ. աշխ., էջ 162:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Եր. Լալալյան. Մուշ-Տարոն, Ամուսնություն և հարսանեկան սովորություններ.– ԱՀ, գ. 26, 1916, էջ 158–159:

¹¹ E. Г. Кагаров. Նշվ. աշխ. էջ 162–163:

¹² ԴԱՆ, 1986, տ. 2: Բանասաց՝ Վեռա Իվանովա-Դավթյան:

¹³ E. Г. Кагаров. Նշվ. աշխ. էջ 163:

¹⁴ Նույն տեղում, էջ 162–163:

¹⁵ B. П. Муратхан. Նշվ. աշխ., էջ 160:

հայրը աղջկա հորը, հարսանիքից մի քանի օր առաջ: Հին Ասորեստանում փեսացուի հայրը բարձրաձայն հայտնում էր հարսնացուի գլխագնի գումարը¹⁶: Հայոց մեջ այս ավանդույթն առանձին շրջաններում էր պահպանված, ինչը դրսևորվում էր հիմնականում աղջկա հարսանեկան ծախսի մի մասը փեսայի հոր կողմից հոգալու սովորույթի մեջ: Մասնավորապես, Մուշում տղայի հայրը երբեմն հարսանիքի ծախսը հոգալու համար տալիս էր ոչ թե գումար, այլ հարսի գլխին կամ վզին կապում էր 5–30 օսմանական ոսկու արժողությամբ մանյակ¹⁷: Երկու ազգերի մեջ էլ հարսի նվերները լինում էին ոսկուց՝ մատանի, գոտի, ապարանջան: Նվիրում էին նաև գլխի հարդարանքի մասեր, հայելի, սանր, ուլունքներ և այլ իրեր՝ կախված սոցիալական կարգավիճակից: Եթե ասորիների մեջ պարտադիր էր յոթ չամուսնացած աղջիկների կողմից այլուրը մաղելու պայմանը, ապա հայոց մեջ դա պարտադիր չէր: Ընդ որում՝ տանտիրուհին հրավիրում էր մի հայտնի ընտանիքից, բազմազավակ, ամուսնու կամ որդու կորուստ չկրած կնոջ, որն առաջինն էր մաղում այլուրը՝ ակնկալելով, որ նորահարսը նրա նման բեղմնավոր ու երջանիկ լինի: Նա առաջին մաղը վերցնելիս բարեմաղթում էր «Այլա, բի խոյույթա»¹⁸ (Աստված ուրախությամբ). դաշտերին ու այգիներին պտղաբերություն, աշխարհին խաղաղություն, առատություն, նորապսակներին՝ երկար կյանք, բախտավորություն: Տաշտադրոնքի («լախմա փյեթա») ժամանակ երկու ազգերի մեջ էլ տանտիրուհին նվեր էր տալիս այլուր մաղողներին: Հայկական հարսանիքը սկսվում էր հինգշաբթի, իսկ ասորականը՝ ուրբաթ երեկոյան: Ասորական հրավերքը ձևով և բովանդակությամբ նման էր հայկականին, մի տարբերությամբ միայն, որ ասորիները գուռնա-դեղլի («գուռնա-դաուլյա») ուղեկցությամբ գինու սափորը ձեռքներին համազուղացիների հարսանիքի հրավիրելիս, ասում էին. «Հարսանիքը մերը չէ, ձերն է» («Խույլա լե-լա դի-յան, ըդոխունը»): Հրավիրվածը համաձայնության դեպքում խմում էր գինին և ասում. «Թող Ձեր հարսանիքը լինի շնորհավոր» («Խույլոխուն ավր բոխիս»)՝¹⁹: Ինչպես ասորիների, այնպես էլ շատ ժողովուրդների մեջ եզր կամ ցուլը («թորա») խորհրդանշում է սերնդած: Ըստ ազգագրագետ Ջ. Խառատյանի՝ եզր մորթելով փեսային էր անցնում սերունդ տալու կարողությունը²⁰: Եզմորթեքը («թորա կրտալթա») հարսանիքի հիմնական ծեսերից էր, որը խորհրդանշում էր փեսայի անցումը տղամարդկանց տարիքային խումբ: Այն ժառանգված է վաղեմի նվիրագործման ծեսերից, որի ժամանակ փեսան տապալելով ցուլին գետին՝ ինքն էր հաղթող ճանաչվում և ձեռք բերում նրա հատկությունները:

¹⁶ Д. Ч. Садаев. История Древней Ассирии. М., 1979, с. 215.

¹⁷ Եր. Լ ա լ ա յ ա ն. Մուշ-Տարոն, էջ 158:

¹⁸ Ասորերեն «Ալլահա»-ն Աստվածն է, իսկ դիմելու ժամանակ, կարճ ասում են՝ «Ալա»:

¹⁹ В. П. Муратхан. Նշվ. աշխ., էջ 160:

²⁰ Ջ. Խ ա ռ ա տ յ ա ն. «Եզ մորթելու» սովորույթը և փեսան հայոց հարսանիքում. – ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, - 2, էջ 116–125:

Ասորական հարսանիքը նույնպես աչքի էր ընկնում ծեսերի մեծ բազմազանությամբ, որոնցում նկատելի էին նրբերանգային տարբերություններ հայկական հարսանիքից: Վերջինս դրսևորվում էր, օրինակ, ամիսե կոտրելու սովորույթի մեջ. այն ասորիների տարբերակում կոտրում էին՝ հարսին հայրական օջախից դուրս հանելու ժամանակ: Ի տարբերություն հայկական հարսանիքի, ասորական հարսանիքում հարսնառի ժամանակ, երբ հարսին հանում էին հայրական օջախից, նրան մոտեցնում էին թոնրին (թանույրա), որի շուրջ հարսը պտտվում էր երեք անգամ²¹: Նա թոնրի շուրջ հրաժեշտ էր տալիս ծնողներին՝ խոնարհվելով նրանց ոտքերին և սպասելով օրհնանքի: Հետո նա մոտենում էր ազգի ծերերին, համբուրում նրանց ձեռքերն ու ստանում նրանց օրհնանքը: Ինչպես հայոց մեջ, այնպես էլ ասորիների մեջ հարսի եղբայրն արգելում էր քրոջ դուրս գալը հայրական տնից և, միայն նվեր ստանալուց հետո բացում ճանապարհը: Հարսին նստեցնում էին ձիու վրա, որը շրջապատված էր փեսայի հարազատներով, և երգ ու պարի նվագակցությամբ հարսնառի գնացքը ճանապարհվում էր դեպի եկեղեցի («ումոա»)²²: Եկեղեցում փեսայի վզին կապվում էր խաչաձև կարմիր մետաքսե թաշկինակ,²³ որը, ըստ ժողովրդական պատկերացումների, խորհրդանշում էր հարսի արյունը: Պսակադրության ամբողջ ընթացքում հարսի դեմքը ծածկված էր կարմիր քողով, որը նա կրում էր մինչև Ջատկի ավագ հինգշաբթի²⁴ (3–4 ամիս շարունակ): Ջատկվա հինգշաբթի («խամշոշիբթ իդա») երեկոյան հանում էին ծածկոցը, որը կոչվում էր բերանբացեք («շրեթա դ յաշմակ») կամ քող-ծածկոցի հանում («շկալթա դ սարփա»): Պսակադրությունից հետո, երբ քահանան վերջացնում էր աղոթքը, փեսայի և հարսի վզին գցում էր եկեղեցական ժապավենը²⁵, խաչաձև կապում, որը, ըստ ժողովրդական մեկնարանության, նշան էր այն բանի, թե «իբր հարսնացուն նստած է փեսայի վզին և ամուր կապված նրա հետ»: Պսակադրության ժամանակ քահանան գինով լի բաժակը, որի մեջ մատանի ու խաչ էր, մոտեցնում էր նորապսակներին, խաչը՝ նարոտի վրա անցկացրած գցում փեսայի վզին, իսկ մատանին հազցնում հարսի աջ ձկույթին: Երկգույն նարոտը (կանաչ-կարմիր) ուներ սերնդաշարունակման խորհուրդ, միաժամանակ նաև պահպանակի դեր էր կատարում, պաշտպանում էր թագավորին ու թագուհուն չարից ու «կապերից»: Պսակադրության ժամանակ փեսան գրպանում պատյանից թաքուն հանում էր դանակը, որպեսզի չար ուժերը և կախարդները իրեն չզրկեին առնականությունից²⁶, իսկ պսակադրության ավարտից հետո այն փակում էր, նորից դնում պատյանի մեջ: Այս նույն ժամանակ փեսայի կողմից մի կին ծալված պտտվում էր եկեղեցու շուր-

²¹ E. Г. Карапов. Նշվ. աշխ. էջ 161–162:

²² ԴԱՆ, տ. 2: Բանասացներ՝ Վերգինե Դավթյան, Վեռա Բվանովա-Դավթյան:

²³ E. Г. Карапов. Նշվ. աշխ., էջ 161–162:

²⁴ ԴԱՆ, տ. 2: Բանասացներ՝ Մ. Մերգեն, Պ. Արրամով:

²⁵ Նույն տեղում:

²⁶ ԴԱՆ, տ. 3: Բանասաց՝ Ռ. Վասիլևա:

ջր, որպեսզի չար ուժերը «չկապեն» փեսային: Նրանք հավատում էին այն բանին, որ «չար մարդիկ» կարող էին վարձել «պառավ կախարդուհուն», որն էլ աննկատ եկեղեցու տարածքում կարող էր կապել մետաքսե թելով քառասուն հանգույց՝ փեսային զրկելով առնականությունից: Եկեղեցուց դուրս գալիս, երկու կողմերից նորապսակների վրա ցանում էին չամիչ, ընկույզ, ցորեն, մանրադրամ և քաղցրավենիք՝ արգասաբեր ու քաղցր կյանքի ակնկալիքով: Երաժշտության ուղեկցությամբ, անընդմեջ հրազենային զարկերով ազապների խումբը նորապսակներին ուղեկցում էր փեսայի տուն: Հարսը նստած էր լինում ձիու* վրա, իսկ ձիու սանձը բռնում էր նրա եղբայրը («ախունա»): Ուղեկցող երիտասարդներից մեկը կարող էր հանկարծակիի բերել հարսի եղբորը և սանձը խլել վերջինիս ձեռքից, կանչելով՝ «Ով է ուզում ինձ հետ մրցել»: Հրավերքը կարող էր ընդունել որևէ մեկը և կոխի բռնվել, որին էլ ասորիները անվանում էին «քյուշթագյար»²⁷: Կովի պահին երաժիշտները հատուկ մեղեդի էին նվագում, իսկ փեսայի հայրը «կովող ու հաղթող տղային» նվեր էր տալիս: Հայկական հարսանիքում փեսայի հայրական օջախում մենամարտում էին երկու հակամարտ խմբեր և փեսայի ծնողներին հրավիրում կոխի բռնվել: Բհարկե, որպես կանոն, «հաղթում» էր մայրը: Մա էլ հենց մայրիշխանության շրջանում կնոջ առաջնային դերի խորհրդանշական դրսևորումներից էր: Հարսանքավորների գլխին կոխի ժամանակ ևս չիր ու չամիչ, քաղցրավենիք էին շաղ տալիս: Ըստ բանասացների մեկնաբանության՝ այս ծեսը միտված էր նրան, որ նորապսակներն էլ կհասնեն ծնողների տարիքին, կլինեն վեճեր, բայց դրանք անպայման կավարտվեն հաշտությամբ ու քաղցրությամբ: Այս ամենից հետո թագավորին նստեցնում էին հարսնաձիու վրա, երգ ու պարով ուղեկցում քավորի տուն, որտեղ փեսայի ոտքերի տակ գառ էին զոհաբերում և մինչ ուշ գիշեր զվարճանում²⁸: Հայոց մեջ պսակի ժամանակ հարսնացուի կոշիկների մեջ, գյուղերում զարնանացան ցորեն էին լցնում, իսկ քաղաքում՝ մանրադրամ, որպեսզի հարսի ոտը «փեբարով» (խերով) զար սկեսրանց տան վրա²⁹:

Բնչպես հարսին, այնպես էլ հարսնաձին էին զգեստավորում՝ ծածկում գեղեցիկ գորգով, վզից ու ականջներից կախում չարխափան գույնզգույն ուլունքաշար, մետաղյա բոժոժիկներ, որոնց զրնգուն ձայնից «չարը» վախենում էր և անվնաս թողնում հարսին:

²⁷ ԴԱՆ, տ. 3: Բանասաց՝ Սառա Յակուբովա:

²⁸ Е. Г. Кагаров. Եզվ. աշխ., էջ 163:

²⁹ Եր. Լ ա լ ա յ ա ն. Մուշ-Տարոն, էջ 168:



Ասորիների հարսանիք. թագավորը խնձորով խփում է հարսին՝

Ասորական հարսանիքում հարսանեկան գնացքի վերջին կանգառը փեսայի տունն էր, որտեղ փեսան («խթնա») և իր մակաները («մուսաիբր») բարձրանում էին տանիք: Վերջիններիս ձեռքին լինում էր քառանկյուն շրջանակ, որից գույնզգույն թելերով կախված էին մրգեր՝ նուռ, խնձոր, տանձ, նաև՝ չամիչի շարան, մումեր, տարբեր զարդանախշերով ու գույներով մետաքսե թաշկինակներ: Այս ծառը (ծառի ոգին, ըստ հին ազգերի, սրբազան էր և սերունդ էր պարզևում կանանց: Այն բեղունության և արգասաբերության խորհրդանիշ էր)³⁰ ասորիներն անվանում էին «ջերյանա» կամ՝ թագվորի այգի՝ «գյանթա դ մալթյա»³¹: Այսպիսի «ծառ» ունեն նաև քրդերը, որն անվանում են «դարե»³²: Քրդերը մինչև այժմ պահպանել են այս ծեսը, իսկ ասորիների մեջ այն պահպանված էր մինչև XX դարի 80-ական թվականները: Ի դեպ, բանասացներից ոմանք վկայում են, որ փեսայի ծառի վրայի նուռը մի ցավալի միջադեպի պատճառով հետագայում դուրս է մղվել կիրառությունից³³:

Փեսան ծառից երեք խնձոր էր պոկում և շարտում հարսի ուղղությամբ: Ենթադրվում էր, որ այս գործողությունը հարսին դարձնում էր բեղուն, բազմածին: Ներքևում կանգ-

³⁰ Ջեյմս Ջորջ Ֆրեզեր. Ոսկե ճյուղը. Մոգություն և կրոնի ուսումնասիրություն, Երևան, 1989, էջ 146–147:

³¹ Е. Г. Карапов. Եզվ. աշխ., էջ 163:

³² Դարե, դարա մրագա-ծառ, մուրագի ծառ (տե՛ս Ամինե Ավդալ. Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 57):

Եր. Լալայան. Վասպուրականի ասորիները.– ԱՀ, գ. 24, Թիֆլիս, 1913, էջ 225:

³³ ԴԱՆ, տ. 3: Բանասաց՝ Նինա Մոխեսևա:

նաժ երկու տղամարդ, պահում էին փայտերին ամրացված ծածկոցը, որպեսզի վերնից հարսի գլխին թափվող մանր դրամներն ու քաղցրավենիքը չվնասեին հարսին, իսկ երիտասարդներն ու երեխաներն այն հավաքում էին ծածկոցի վրայից: Այս արարողությունն ուներ նորասպասկներին լիություն, առատություն պարգևելու խորհուրդ: Մասնակիցները մեծ ջանքեր էին թափում՝ վերցնելու նետված խնձորներից, քանի որ ենթադրվում էր, որ դրանք օժտված են սրբազան կարողությամբ:

Ուրմիայից եկած ասորի փեսան թաշկինակի միջից հանում էր խնձորը, համբուրում այն ու նրանով խաչակնքվում, ապա՝ ընկերների «ուռայի», աղմուկ-աղաղակի ներքո, նետում դեպի հարսը³⁴: Հայոց մեջ նորահարսը, երբ մուտք էր գործում ամուսնու օջախ, մի նուտ էր կոտրում՝ դռանը հարվածելով³⁵: Իսկ լեռնային ասորիների մեջ (Արզնի եկածները) հարսը, որը մուտք էր գործում մի այլ օջախ, կովի յուղ էր քսում դռան վերնի որմնաքարին³⁶: Հայոց մեջ նմանատիպ գործողություն կատարվում էր փոքր-ինչ այլ կերպ. նորահարսը մոտենում էր շեմին, ձեռքը թաթախում այլուրի մեջ և խաչեր անում դռան սեմին: Ըստ ազգագրագետ Վ. Բդոյանի՝ այս տարբերակն աղերս ուներ հաց պարզևող աստվածությունների հետ («Վանաստուր, Ամանոր»)՝³⁷: Սրանք ևս չար ոգիներից պաշտպանող միջոց էին՝ լիություն պարգևելու խորհրդով:

Ինչպես հայկական տարբերակում, այնպես էլ ասորիների մեջ նորահարսն առանձնացվում էր փեսայի տանը. նրան ուղեկցում էին հատուկ պատրաստված անկյունը («գյունույնա»)՝ գորգերով զարդարված: Անկյունը ծածկող վարագույրը («փարդա») զարդարում էին չարխափան, հմայական պահպանակներով, ուլունքներով և այլ զարդերով³⁸: Անկյունում նստած ժամանակ հարսի գիրկն էին դնում արու երեխա, հարսն էլ վերջինիս նվիրում էր իր ձեռքով պատրաստված ինչ-որ նվեր (ձեռագործ գուլպա, շապիկ): Ծիսական այս գործողությունը նպատակ ուներ նմանողական մոգությամբ ապահովել ապագա երեխայի ծնունդը, ինչու չէ, նաև՝ առաջնեկի սեռը: Փեսայի կողքին նստում էր քավորը («կառիվա»), հարսի կողքին՝ քավորակինը («կառութա»):

Ինչպես հայերի, այնպես էլ ասորիների ավանդական ընտանիքում շատ մեծ էր քավորի դերը: Ընտանեկան նշանավոր բոլոր իրադարձությունների հիմնական մասնակիցն էր նա, և բոլոր տոնախմբությունների, խրախճանքների, ինչպես նաև սգո արարողությունների անցկացման գլխավոր դերակատարն ու պատվավոր դեկավարը: Քավորը սրբություն էր ոչ միայն նորասպասկների, այլ նաև ամբողջ ազգատոհմի համար: Քավորն ասորիների մեջ ժառանգական էր և փոխադարձ: Ի տարբերություն հայերի, ասո-

³⁴ ԴԱՆ, տ. 3: Բանասաց՝ Ռախի Ալյան:

³⁵ Ռ. Ն ա հ ա պ է տ յ ա ն. Աղանիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, Երևան, 2007, էջ 135:

³⁶ ԴԱՆ, տ. 2: Բանասաց՝ Լայա Վասիլյան:

³⁷ Վ. Բդոյան. Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Երևան, 1974, էջ 61:

³⁸ ԴԱՆ, տ. 3: Բանասաց՝ Եկատերինա Աբրամովա:

րիների մեջ չկա քավոր-սանիկ հասկացությունը, այլ առկա է քավոր-քավոր հարաբերությունը. ես քո քավորն եմ, դու իմ քավորը: Քավորն էր կարգավորում և լուծում ընտանեկան բոլոր վեճերը: Մեր օրերում քավորի վերը նշված բոլոր պարտականությունները աստիճանաբար նվազում են՝ տեղը զիջելով թամադային, իսկ քավորը սահմանափակվում է միայն թանկարժեք զարդ նվիրելով նորահարսին կամ նորապսակներին: Հայոց մեջ քավորը գոտին երեք անգամ աջից ձախ պտտելով նորահարսի գլխավերևում, այն թեթևակի խփում էր նրա մեջքին և ասում. «Աստված քեզ որդի պարզևի» և կապում գոտին³⁹: Արծաթե գոտին դիտվում էր ամուսնացած լինելու խորհրդանիշ, որովհետև չամուսնացած աղջիկներն ու երիտասարդներն այն կապելու իրավունք չունեին:



Թլքեֆի ասորիների հարսանիք

(Լ. Մ Ե Ս Ր Ո Ս. Քուրդիստան և քուրդեր, Փարիզ, 1957, էջ 21)

Ե՛վ ասորական, և՛ հայկական հարսանիքներում փեսան համարվում էր թագավոր. բոլորը նրա առջև հաշվետու էին, և հարսանիքում ծագած վեճերը նա էր դատում⁴⁰: Թագավորը («մալքյա») պատժում էր «հանցագործին» և տուգանում (հավ, գինի), իսկ պահակները («գզիր») այդ ամենը տեղափոխում էին ընդհանուր սեղանին: Հայտնի է, որ հարսն էլ համարվում էր թագուհի («մալիքթա»): Նա էլ իրավունք ուներ տուգանելու,

³⁹ Գ. Ի ֆ Ե կ յ ա ն. Քավորը. – ԱՀ, գ. 24, Թիֆլիս, 1913, էջ 90–91:

⁴⁰ Народы Передней Азии. Ассирийцы, т. 1. М., 1957, с. 298.

պատժելու աղօթիկների խմբին: Հարսանեկան սեղանին մատուցում էին ճաշատեսակներից՝ «դոլմա դը քալամա» (կաղամբով տոլմա), «քրփթը» (քուֆթա), յախնի, խաշլամա: Ուզեղից խմիչքներից՝ «խամրա» (գինի), արաղ (օղի), զովագուցիչ ըմպելիքներից՝ «դավը» (թան): Մուրճի («կահվա») հետ մատուցում էին քաղցրավենիք («խավունա»), հավվա՝ երեսը նախշած ընկույզով, թաց ու չոր մրգեր (նայած տարվա որ եղանակին է հարսանիքը): Ամբողջ խրախճանքի ժամանակ հրավիրվածները երգում էին, պարում: Ասորիները պարում էին «շեխանե», «խիգյա», «տրինգյա», իսկ հայերը՝ «գյովընդ», «գորանի», «քոչարի», «երեքոտք» և այլն: Եթե հայոց մեջ հարսանիքի երրորդ օրը որոշ պատմաագագրական շրջաններում (Ադանիք, Մուշ-Բուլանըխ) նվեր («սրբի») տալու օրն էր, ապա ասորիների մեջ դա չորրորդ օրն էր և կոչվում էր «սաբախտա»⁴¹: Եթե հայոց մեջ քավորն էր հրապարակում հանձնվող նվերների տեսակը, դառնում կանչող⁴², մեծարում նվիրատուին, մեծացնում նվերների արժեքը, ապա ասորիների մեջ ընտրվում էր մի ազդեցիկ մարդ՝ հարսանիքը կարգավորող («րիշա դ խլուլլա, մարա դ խլուլլա»)⁴³, որն էլ կարգավորում էր եկած գումարը (որպես նվեր) հարսանիքի տիրոջը հանձնելու գործը՝ հօգուտ նորաստեղծ ընտանիքի: Հարսանիքի կառավարողը հայտարարում էր հարսանիքի ավարտի, թագավորին «թագից գցելու» գործողությունը և ծառի՝ «ջեբլյանայի» վաճառքի մասին: Այս ծեսն էլ հիշեցնում է հայոց մեջ մակարների (ազաբների) բոխչայի բացման և ընդհանուր հյուրասիրության արարողությունը: Երիտասարդների խրախճանքը շարունակվում էր մինչև ուշ գիշեր:

Հարսանիքից առաջ հարսնացուն ինքը պետք է նախապատրաստեր իր օժիտը. մասնավորապես՝ կարեր իր համար զգեստներ, ասեղնագործեր հագուստի առանձին մասերը և իր սենյակի զարդարանքի համար պատրաստեր ասեղնագործություններ ու ժանյակներ⁴⁴: Թե՛ ասորիների, թե՛ հայերի հարսները բերում էին նույնատիպ օժիտ (սնդուկ, անկողին, գորգ, ջեջիմ, հագուստ, ձեռագործ գուլպաներ, զոզնոցներ, հայելի, սանր, զարդեր և այլն):

Նորապսակների առագաստը ասորիների մեջ պատրաստում էր փեսայի մայրը՝ սկեսուրը («խմաթա») կամ մեծ հարսը: Հարս ու փեսայի կողքին դնում էին քաղցրավենիք՝ «խավունա», գաթա («քյադը»), մրգեր («տունյաթը»), մեղր, չիր ու չամիչ, ընդեղեն, գինի: Առագաստի գիշերը փեսան այս ամենից հրամցնում էր հարսնացուին, իսկ հարսն այն ընդունում էր որպես ամուսնական կապի, մերձեցման համաձայնություն: Հարսի մաքրության խորհրդանիշ հանդիսացող սավանը ցուցադրում էին բոլոր հարազատներին, և այն պահվում էր փեսայի մոր մոտ այնքան ժամանակ, մինչև ծնվեր առաջին երեխան: Մոր կուսության սավանը և նորածնի շապիկը կապում էին իրար, վրան խրում երկու

⁴¹ Е. Г. Карапов. *Նշվ. աշխ.*, էջ 162:

⁴² Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. *նշվ. աշխ.*, էջ 135:

⁴³ Е. Г. Карапов. *Նշվ. աշխ.*, էջ 163:

⁴⁴ Նույն տեղում, էջ 163–164:

ասեղ և թաղում շեմի տակ⁴⁵: Պարզերես հարսին անվանում էին «փաթա խվարթա», իսկ սներեսին՝ «փաթա քյումթա»:

Հետհարսանեկան ծիսաշարում առանձնանում էր կարմիր խնձորի («խաբուշա սմուկա») ձեսը: Այն գրեթե նույնական է հայկական «կարմիր խնձոր» ձեսին, միայն այն տարբերությամբ, որ հարսի անաղարտության համար «շնորհակալությանը» փեսան անձամբ է մասնակցում. Նա իր քույրերի հետ պարտադիր շնորհակալական այց է կատարում հարսի հայրական տուն՝ աղմուկ-աղաղակով, բոլորի ձեռքում՝ նվերներ, մրգերով և քաղցրավենիքով լի զամբյուղներ: Թե՛ հայոց, թե՛ ասորիների մեջ հարսանիքի ժամանակ գերակշռող էր կարմիր գույնը: Ընդհանուր առմամբ, կարմիր էր հարսի քողը, գոգնոցը, ուսկապը, փեսայի թաշկինակը, թիկնոցը և հարսի անարատության խորհրդանիշ հանդիսացող «կարմիր խնձորը»: Կարմիրը՝ արգասավորության, կյանքի, իսկ կանաչը՝ երիտասարդության, ծաղկման, ծլարձակման խորհրդանիշերն էին:

Բանահյուսական որոշ նյութերում (ժողովրդական երգերում) հույժ խորաթափանցությամբ բացահայտվել է նորահարսի դրությունը նահապետական ընտանիքում, նրա նկատմամբ կիրառված ծիսարգելքները (տաբու) բնորոշ էին ոչ միայն ասորիներին, այլև Կովկասի և Արևելքի շատ ժողովուրդների: Մի խումբ արգելքներ նորահարսին ուղեկցել են նրա ամբողջ կյանքի ընթացքում. բերանը ծածկելու սովորույթը, չխոսկանությունը («կառիվա»)՝ քավորի, («խմյանա») սկեսրայրի, («ըմա») տագրերի և այլոց հետ: Մյուս սահմանափակումները՝ մեկուսի հաց ուտելը, ամուսնու անունը չտալը, պահպանվել էին մինչև XX դարի 60–70-ական թվականները:

Ընտանեկան ավանդույթներն ընդհանրապես պահպանման մեծ ներուժ ունեին ասորիների մեջ՝ պայմանավորված նրանց համախումբ բնակեցմամբ և, հիմնականում՝ տեղաբնիկների հետ ամուսնական կապերի սահմանափակությամբ: Առանձին դեպքերում այդ ավանդույթների արմատները հասնում էին մինչև Հին Ասորեստան: Մասնավորապես, Մադանը նշում է, որ Հին Ասորեստանում երիտասարդ կինը (հարսը) պետք է իրեն պահեր հեզահամբույր, հարգեր ամուսնու ընտանիքի սովորույթները: Նրա անհամերաշխությունն ամուսնու ծնողների հետ կարող էր հասցնել բաժանության և երկպառակության, ի վերջո, նրան կվերադաձնեին հայրական տուն⁴⁶:

Ինչպես տեսանք, ասորական հարսանեկան ձեսը շատ առումներով մոտ է հայկական հարսանիքին և բազմաթիվ ընդհանրություններ ունի նրա հետ: Այնուամենայնիվ, ձեսերի բազմազանությամբ աչքի ընկնող բուն հարսանիքը նկատելիորեն տարբերվում է հայկական հարսանիքից: Վերջինս դրսևորվում է, օրինակ, ավսե կոտրելու սովորույթի մեջ (այն կոտրում են հարսին հայրական օջախից դուրս հանելու ժամանակ), նշանդրեքին քահանայի ու տիրացուի պարտադիր ներկայության մեջ: Վերջին տարբերությունը կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ պետական-

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Д. Ч. Садаев. Նշվ. աշխ., էջ 215:

նության բացակայության պայմաններում եկեղեցու ազդեցությունը և դերակատարությունն ավելի մեծ է եղել ասորիների մեջ: Հինա դրեքր ավելի վաղ և ավելի ճոխությամբ կատարելը իր հերթին կարող է վկայել այն հանգամանքը, որ համախմբված ապրելով, ասորիներն ավելի շատ են պահպանել նվիրագործական (տարիքային նվիրագործման) ծեսերի վաղ շրջափուլերի մնացուկներ): Այս մասին են վկայում նաև գինու բաժակի մեջ նշանը փոխանցելու, միջնորդ կնոջ դերակատարության հետ կապված, ինչպես նաև նշանից առաջ «հարս» կոչվելու սովորությունները: Մատանին կրելու՝ աջ ճկույթ – ձախ մատնեմատ հակադրությունը կարող է խոսել չարի և բարու, աջ ու ձախ կողմերի հակադիր ընկալումների մասին:

Արդի ասորական հարսանիքում ավանդական սովորություններն ավելի շատ պահպանվել են հատկապես՝ Իրանի, Իրաքի, Սիրիայի, Ավստրալիայի, Եվրոպայի (Բելգիայում՝ Թուրքիայից ներգաղթած) ասորիների մեջ: Մասնավորապես հարսի «պարզերես» լինելու հանգամանքը, ազգային շուրջպարը, փեսայի սպիտակ կոստյումը, որը ցուցում է հարսի անադարտությունը, մաքրությունը:

Այսօր և՛ հայերի, և՛ ասորիների համար փոքր-ինչ դժվար է պահել ազգային դիմագիծը: Այս ամենին խոչընդոտ են տնտեսական, սոցիալական խնդիրները, որոնց ազդեցության ոլորտը լայնացել է, և հարսանեկան որոշ ավանդույթներ (եզնմորթեք, տաշտադրոնք, կանչ-հրավերք, ազգային երաժշտություն) աստիճանաբար մոռացվում են: Արդի հասարակությունում հոգևոր մշակութային արժեքների փոխանցման դաշտը խիստ սահմանափակ է: Ժամանակի ընթացքում այս սովորությունները կրել են զգալի փոփոխություններ՝ համահարթվել ու ընդհանրական են դարձել, ուստի դրանց գրառումն ու ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ են էթնիկ սակավաթիվ խմբի՝ Հայաստանի ասորիների յուրատիպ մշակույթի համակարգի հնարավոր ամբողջական պատկերն ունենալու համար:

СРАВНИТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА РИТУАЛА
АССИРИЙСКОЙ И АРМЯНСКОЙ СВАДЬБЫ
(Конец XIX – начало XX вв.)

ГАЛЯ ДАВИДОВА

Резюме

В рассматриваемый период традиционный свадебный обряд со всеми этапами, атрибутами, а также церемониями почти полностью был сохранен среди ассирийцев Армении. Более того, ассирийская община, живя исключительно совокупно, несмотря на близкую взаимосвязь с армянской культурой, тем не менее сохранила некоторые особенности культуры, которые были

включены, в частности, в свадебный обряд. Об этом свидетельствует сравнительная характеристика армянской и ассирийской свадьбы. Особенно важны роли кума (кавора) и женщины-посредницы, особенно во время полуобвенчания (кеспсак), порядок вручения свадебного кольца в стакане вина, церемония окрашивания хной; порог, перед которым разбивают тарелку, хранение савана девственности и закапывание его в землю с рубашкой новорожденного, являющиеся пережитками более архаических культурных слоев. Следует отметить, что ассирийский свадебный обряд имеет много общего с армянским обрядом и является важным компонентом переднеазиатского культурного наследия.

COMPARATIVE CHARACTERISTICS OF ASSYRIAN AND
ARMENIAN WEDDING RITES
(The late 19th – early 20th centuries)

GALYA DAVIDOVA

S u m m a r y

The traditional wedding ceremony with all its phases, as well as ritual attributes was almost completely preserved among the Assyrians in Armenia during the investigated period. Moreover, despite the very close relation with the Armenian traditional culture the Assyrian community kept a number of ethnic cultural characteristics that were obviously included in the wedding ceremony. The comparative description of the Assyrian and Armenian weddings is a proof to it. The bigger role of godfather and negotiator is remarkable, particularly during the process of kespsak, henna, serving wedding ring in a glass of wine, breaking plates in the entrance of bride's house, keeping the virginity sheet and burying it with the baby's shirt which are remains related to more archaic cultural stages. It should be noted that the Assyrian wedding ceremony with its basic phases, process and ritual attributes has much in common with the Armenian wedding ceremony. Generally it's a significant component of the Asian Near East cultural heritage.